ԱՄՐՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՄՈՒՐ ՀԻՄՔԸ՝ ՄԻԱՍԻՆ

2025



ՏԻԳՐԱՆ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

«Ամրոց» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի նախագահ

«Ամրոց» հիմնադրամի 2025 թ.-ն եղել է համախմբված աշխատանքի և կարևոր ձեռքբերումների տարի: 2025 թվականին մենք շարունակեցինք մեր գործող նախագծերը՝ միտված պետության և ազգային արժեքների պահպանմանը, մեկնարկեցինք նորերը և պլանավորում ենք ավելի հավակնոտ նախաձեռնություններ: Մենք հավատում ենք, որ ուժեղ հիմքը կառուցվում է միասնականությամբ: Շնորհակալ ենք, որ այս ընթացքում մեր կողքին եք և ձեր վստահությամբ օգնում եք առաջ շարժվել: Վստահ ենք, որ միասին կկառուցենք մեր երկիր ամրոցը:

ՄԵՐ ԹԻՄԸ

Հոգեբարձուների խորհուրդ

Տիգրան Բունիաթյան	Ջեռներեց բարերար
Կարեն Սիմոնյան	«Ամրոց» հիմնադրամի ՀԽ անդամ Տնտեսագետ
Նունե Մեգոյան	«Ամրոց» հիմնադրամի ՀԽ անդամ, հասարակագետ
Արթուր Զուրաբյան	«Ամրոց»հիմնադրամի ՀԽ անդամ, Գործարար, բարերար
Արամ Փախչանյան	«Ամրոց» հիմնադրամի ՀԽ անդամ, Կրթության փորձագետ
Դավիթ Փախչանյան	«Ամրոց» հիմնադրամի ՀԽ անդամ, Գործարար, բարերար
Տեր Մեսրոպ Քահանա Արամյան	Աստվածաբան, ուսուցիչ, հասարակական գործիչ
Մանուկ Հերգնյան	«Ամրոց» հիմնադրամի ՀԽ անդամ, Տնտեսագետ, վենչուրային ներդրող, տ.գ.թ.

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ



ԱՆԻ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ
Տնօրեն

ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ
Ծրագրերի ղեկավար

«Ամրոց» հիմնադրամի պատկերացմամբ ապագայի հիմնասյուներն են՝ լեզուն, հավատքը, հայրենիքը և արժեքները: Այս տարի էլ թե՛ հովանավորված, թե՛ իրականացված ծրագրերը եղել են այս շրջանակում:

ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիքն ուժեղ է, երբ ապագան կերտվում է ամենօրյա աշխատանքով: Այն լեզուն է, որով մտածում ու երազում ես, պատմությունը, որի մեջ ճանաչում ես ինքդ քեզ, մշակույթը, որը գաղափարներիդ հիմքում է:

ՀԱՎԱՏՔ

Ապրում ենք մեր պատմությամբ, միավորվում՝ հավատքով: Հայոց պատմության մեջ հայ ազգը կորցրել է պետության տարածքը, այդ ժամանակ՝ եկեղեցին դարձել է ազգի պետությունը: «Ամրոց» հիմնադրամը նորարարական, կրթական ծրագրերով և ազգային-եկեղեցական ավանդույթների պահպանմամբ աջակցում է հոգևոր արժեքների տարածմանը:

ԱՐԺԵՔՆԵՐ

Արժեքները շատ են, նպատակը մեկն է՝ հայրենիքի հզորացում: «Ամրոց» հիմնադրամում արժեքը խոսքը չէ, այլ գործողություն, հիմք, որի վրա կառուցվում է ապագան՝ ապահովելով հայոց ինքնության շարունակականությունը:

ԼԵԶՈՒ

Հայախեզու ապագա՝ ոլորտի մասնագետների աջակցությամբ, հայերեն բովանդակության և լեզվի՝ հասարակության տարբեր շերտերում զարգացման և կիրառության խթանմամբ:

ծրագիր
Բյուջե 13մլն դրամ

«ԾԻԼ ՏՈՒՐ ՀԱՅԵՐԵՆ»

2025 թվականին «Ծիլ տուր հայերեն» ստեղծագործական մրցույթը դարձավ «Ամրոց» հիմնադրամի ծրագրային գլխավոր առանցքը՝ ընդգրկելով շուրջ 200 պատանի ՀՀ մարզերից և Սփյուռքից:
Ծրագիրը միավորում է լեզուն, կրթությունը և ստեղծագործ մտածողությունը՝ ձևավորելով երկարաժամկետ արժեք և հայերեն ստեղծագործող պատանիների համայնք:

Արդյունքները՝ թվերով

- 200 վերջնական հայտ
- Մասնակցություն ՀՀ մարզերից և Սփյուռքից
- 3 հիմնական անվանակարգ
  - *Ստեղծագրություն*
  - *Պատկերապատում / Կոմիքս*
  - *Պաստառների դիզայն*
- խրախուսական անվանակարգ՝ «Օտարագիր»

«Ամրոց» -ի թիմի համար ուրախալի փաստ արձանագրվեց՝ աշխատանքները ներկայացված էին ոչ միայն արևելահայերենով, արևմտահայերենով, այլև հայերենի տարբեր բարբառներով: Սփյուռքից մեր հայ պատանիները աշխատանքներ են ներկայացրել նաև ռուսերեն, անգլերեն և իսպաներեն լեզուներով (Օտարագիր խրախուսական անվանակարգում):

Յուրաքանչյուր հիմնական անվանակարգում ընտրվեցին լավագույն 3 աշխատանքները, որոնք արժանացան նյութական մրցանակների: Ցավոք, հաղթողներ ու լավագույն աշխանքներ չունեցանք պատկերապատում անվանակարգում, ինչը մեր թիմի համար նաև 2026-ի անելիքների համար կողմնոնոշիչ եղավ:
Բացի հիմնական մրցանակներից, սահմանվել էին հատուկ մրցանակներ ժյուրիի, «Ամրոց» հիմնադրամի թիմի և «Ծիլ» պատանիների կողմից:

«Օտարագիր» խրախուսական անվանակարգ
«Օտարագիր» անվանակարգն այս տարի նորություն էր մասնավորապես սփյուռքի պատանիներին ներգրավելու համար: Առանձնացված լավագույն աշխատանքների հեղինակները պարգևատրվեցին հայագիտական կրթական ծրագրերով: Այս մոտեցումը նպատակ ուներ ոչ միայն գնահատել ստեղծագործությունը, այլև աջակցել մասնակիցներին զարգացնել հայերենը:

Թափանցիկ գնահատման համակարգ

Մրցույթի գնահատման գործընթացը կազմակերպվել է անանուն սկզբունքով:

Ժյուրիի անդամները չեն ունեցել որևէ տեղեկատվություն մասնակիցների ինքնության վերաբերյալ. չեն տեսել անուններ, չեն իմացել մասնակցի սեռը, չեն ունեցել անձնական տվյալներ:

ՃիԼ տուր թերթոն

2025 թվականին «Ճիլ տուր հայերեն» մրցույթի շրջանակում առաջին անգամ ներկայացվեց «ՃիլՏա» թերթոնը:

Թերթոնում ընդգրկվեցին մրցույթի լավագույն և խրախուսված ստեղծագործությունները՝ ապահովելով մասնակիցների աշխատանքների հանրայնացում և շարունակական տեսանելիություն: «ՃիլՏա»-ն ստեղծվեց այն համոզմամբ, որ թեև մրցույթի կանոններով բոլոր աշխատանքները չեն կարող արժանանալ մրցանակի, յուրաքանչյուր պատանու ներաշխարհ արժանի տեսանելի լինելու: Թերթոնը դարձավ պատանեկան ազնիվ խոսքի հարթակ՝ հնարավորություն տալով մեծահասակ ընթերցողներին տեսնել հայրենիքի գույներն ու պատանեկան հույզերը նոր սերնդի աչքերով:

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հիմնական գործընկեր դարձավ Viva հեռահաղորդակցության առաջատար օպերատորը: Գործակցություն ստեղծվեց KARAPP VLUME M.A.M Picsart ընկերությունների հետ, որոնք բոլորը մրցականեր սահմանեցից մասնակիցների համար:

ԿՐԹԱԿԱՆ ՃԱՆԱՉՈՒՄ և ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025 թվականին «Ճիլ տուր հայերեն»-ը պաշտոնապես ճանաչվեց որպես կրթական մրցույթ (ԿԶՆԱԿ):

Ծրագրի շրջանակում ձևավորվեցին գործակցություններ դպրոցների, կրթական հարթակների և սփյուռքի կառույցների հետ՝ ընդլայնելով ծրագրի ազդեցության շրջանակը և ապահովելով դրա շարունակական զարգացումը:

Օբերտոն Production-ի հետ գործակցությամբ «Դվին մյուզիք հոլում»՝ գրական փառատոնի շրջանակում: Հրավիրվեցին բոլոր մասնակիցները՝ մասնակցելու տոնական միջոցառման փակմանը: Օբերտոնի շնորհիվ պատանիներն իրենց աշխատանքները տեսան կենդանացած (ստեղ ակտիվ հոլում գնա անմիացիայի վիդոյի վրա)

2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՆԵԼԻՔՆԵՐ

2026 թվականին «Ամրոց» հիմնադրամը նախատեսում է ընդլայնել «Ճիլ» ծրագրի ազդեցությունը՝ ներդնելով նոր բաղադրիչ՝ «Ճիլ տուր» աշխատարանների շարք, որի նպատակ է ապահովել մրցույթից դուրս շարունակական կրթական ներգրավվածություն:

→

ՀԱՅԱՊԱՏՈՒՄ
Բյուջեն՝ 4մլն

Հայոց պատմության անիմացիոն աշխարհը՝ պատանիների համար:

2025 թվականին մեկնարկեցինք մեր անեննահավակնոտ նախագծերից մեկը՝ հայոց պատմության մատչելի հասանելիություն պատանիներին: «Հայապատում» նախագծի մեկնարկը տրվեց, սակայն արդյունքները կլինեն 2026 թվականին: «Ամրոցը»–ը հայոց պատմությունը ներկայացնելու է ժամանակակից, դինամիկ և հասկանալի ձևաչափով՝ այն դարձնելով հետաքրքիր և ընկալելի նոր սերնդի համար:

Գործարար և բարերար Արթուր Սողոմոնյանի գլխավոր հովանավորությամբ անմիջապես սկսվել է նախագիծը, սակայն տեսաշարի յուրաքանչյուր մաս պետք է գտնի իր հովանավորին: Առաջինը՝ Հայերի՝ քրիստոնեության ընդունման մասին պատմող սերիայի հովանավորը Հայ Օգնության Ֆոնդն է:

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ
Յուրաքանչյուր տեսանյութ ստեղծվում է գիտական թիմի մասնակցությամբ՝ ապահովելով պատմական ճշգրտություն:
Միևնույն ժամանակ բովանդակությունը ներկայացվում է.

- *դինամիկ անիմացիայի միջոցով*
- *մատչելի լեզվով*
- *հումորի և թեթև ներկայացման ձևաչափով*

Նախագիծը նպատակ ունի հայոց պատմությունը ներկայացնել ոչ թե որպես չոր փաստերի շարք, այլ որպես կենդանի պատմություն՝ բացահայտելով Հայաստանը որպես քաղաքակրթությունների խաչմերուկ և շեշտադրելով հայկական մշակույթի համաշխարհային ազդեցությունը: Այս մեկ նախագծով միանգամից մի քանի խնդիր է լուծվում. պատանիների ներգրավվածության բարձրացում պատմամշակութային թեմաների շուրջ, թվային կրթական բովանդակության ստեղծում, ինչպես նաև հայոց պատմության միջազգային ներկայացման նոր գործիք է ստեղծվում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿ և ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ
«Հայապատում»-ը նախատեսված է 12+ տարեկան պատանիների համար:
15-18 մասից բաղկացած անիմացիոն տեսաշար
Յուրաքանչյուր տեսանյութ՝ մինչև 5-7 րոպե
Առաջին մասը պատրաստ կլինի 2026 թ մարտ ամսին
Տեսաշարը կհրապարակվի «Ամրոց» հիմնադրամի YouTube հարթակում:



«ԵՐԵԽԱՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՍՏ» սոցիալական արշավ
Բյուջե 3,736,000

«Ամրոց» ազգային հիմնադրամն ընտանիքը դիտարկում է որպես ազգային անվտանգության, մշակութային շարունակականության և պետական կայունության առանցքային հիմք: Ընտանիքի գաղափարը հիմնադրամի գործունեության առանցքում է. երեխաներով հարուստ հասարակությունը միայն սոցիալական ընտրություն չէ, այլ ռազմավարական անհրաժեշտություն:

2025 թվականին հիմնադրամը մեկնարկեց «3-րդը կարևոր է» 6 ամսյա սոցիալական արշավը:

Խնդրի փաստացի հիմքը
Հայաստանի ծնելիության գործակիցը վերջին տարիներին տատանվում է 1.6–1.7 մակարդակում, մինչդեռ բնական աճ ապահովելու համար անհրաժեշտ է առնվազն 2.2:

2025 թվականի հունվար–սեպտեմբեր ամիսներին ծնելիությունը նվազել է ևս 5%, իսկ նախորդ տարի արձանագրվել է 7.2% անկում:

Այս ցուցանիշները փաստում են, որ խնդիրը միայն ժողովրդագրական չէ, այլ ռազմավարական:

Մեր նպատակ էր և է փոխել հասարակական ընկալումները և ձևավորել նոր մշակույթ, որտեղ երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքները դիտարկվում են որպես ազգային հպարտություն, ոչ թե բացառություն:

«Ամրոց»-ը այս նախաձեռնություն իրականացնելիս ընտրեց առաջնորդվել ոչ թե պաշտոնական կոչերով, այլն ոգեշնչման ճանապարհով առաջանորդվելը:

Արշավը չի սահմանափակվում միայն հաղորդակցությամբ: Այն ստեղծում է գործնական հարթակ, որտեղ բիզնեսները, կազմակերպությունները և բրենդները կարող են ներգրավվել առանց լրացուցիչ ֆինանսական բեռի:

Հիմնադրամի կողմից մշակվել է ամբողջական բրենդային փաթեթ, որը տրամադրվում է անվճար օգտագործման համար:

Այն ներառում է.
- «Ժպտացող արև» լոգո
- Գունապնակ, կերպարներ, պատկերագրություն
- Երկլեզու ուղեցույց՝ կիրառման տարբեր օրինակներով
- Պատրաստի բրենդավորման լուծումներ տարբեր ոլորտների համար

Այս լուծումները կարող են կիրառվել սննդի, բանկային, ծառայությունների, մարքեթինգի և մանկական արտադրանքի ոլորտներում:
Նախաձեռնության արդեն միացած ընկերություններ կան, որոնք մաս են դարձել փոփոխության շարժմանը:

ԱՐՑԱԽՑԻ 2 ԳՐՈՂԻ ԳՐՔԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Բյուջե 2,500,000 դրամ

Հայերեն բովանդակության զարգացման աջակցություն «Ամրոց» հիմնադրամի թիմի առաջանահերություններց է: Մեր թիմը ցանկանում է հայոց լեզվի զարգացում լինի հասարակության տարբեր շերտերում: Հիմնադրամի նպատակն է ձևավորել հայալեզու բովանդակությամբ հարուստ միջավայր՝ գործակցելով ոլորտի մասնագետների հետ և աջակցելով ստեղծագործողներին:

2025 թվականին այս ուղղության շրջանակում հիմնադրամը աջակցել է արցախցի երկու գրողների գրքերի հրատարակությանը:

«Ականատեսի օրագիրը»

2025 թվականին «Ամրոց» հիմնադրամի գլխավոր հովանավորչությամբ և Newmag հրատարակչության կողմից լույս է տեսել Ծովինար Բարխուդարյանի «Ականատեսի օրագիրը» գիրքը: Գրքում ներկայացված են 12 կանանց և հեղինակի վկայությունները, որոնք պատմում են պատերազմի, կորուստների, դիմակայության ու տոկունության մասին: «Ականատեսի օրագիրը» փաստավավերագրական և գրական հուշերի ամբողջացում է:

«Հրաժեշտի աչքերը» *պատմվածքների ժողովածու*

2025 թվականին «Ամրոց» հիմնադրամի գլխավոր հովանավորչությամբ և Newmag հրատարակչության կողմից լույս է տեսել Հերմինե Ավագյանի «Հրաժեշտի աչքերը» պատմվածքների ժողովածուն: Ժողովածուն ներկայացնում է պատերազմի հետևանքները, մարդկային ճակատագրերը, կարոտն ու լռությունը՝ հայացքների ու հիշողությունների միջոցով փոխանցված ցավն ու հույսը:

ՍՈՆԱ ԶԱԽԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ
Բյուջե - 1,200,000 դրամ

«Ամրոց» հիմնադրամը տրամադրում է նախագծերի կառավարման և նպատակային նվիրատվությունների իրականացման հարթակ՝ ապահովելով, որ բարերարների աջակցությունը հասնի հասցեատերերին թափանցիկ և արդյունավետ ձևով: Այս մոդելի օրինակներից է Սոնա Զախարյանի հիշատակի կրթաթոշակը, որը հիմնադրել են նրա որդիները՝ Մանուկ և Ստեփան Հերգնյանները: Ծրագիրը կառավարվում է «Ամրոց» հիմնադրամի կողմից:

Ծրագրի նպատակ
Կրթաթոշակը սահմանվել է Գավառ քաղաքի Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սոնա Զախարյանի հիշատակին, ով ավելի քան 30 տարի իր կյանքը նվիրել է կրթությանն ու հայոց լեզվի դասավանդմանը: Կրթաթոշակը նախատեսված է Գավառի N3 դպրոցի բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտների համար:

Իրականացում և արդյունքներ
- Ծրագիրը գործում է արդեն 4 տարի
- Ներկայումս կրթաթոշակից օգտվում է 4 ուսանող
- Ուսման վճարները ֆինանսավորվում և կառավարվում են «Ամրոց» հիմնադրամի կողմից

Ծրագրի նշանակություն
Սոնա Զախարյանի հիշատակի կրթաթոշակը համադրում է հիշատակի պահպանությունը և կրթական շարունակականության ապահովումը՝ վերածվելով երկարաժամկետ ազդեցություն ունեցող նախա-ձեռնության:

Կրթաթոշակի շահառուներն են

Էմմա Մանուկյանի 2025 Ամերիկյան Համալսարան, Համակարգչային գիտություններ

Ելենա Հովհաննիսյան 2024 ՀՖՀՀ, Կառավարում

Նունե Մոսիկյան 2023 Ամերիկյան Համալսարան, Քաղաքագիտություն

Միլենա Եղոյան 2022 ԵՊՀ, Հանրային քաղաքականություն և կառավարում

«**ԴԱՎԻԹԲԵԿՅԱՆ ԽԱՂԵՐ**» ռազմամարզական մրցույթ փառատոնի
Դավիթբեկյան խաղեր՝ ուժ երիտասարդության մեջ:
Բյուջե՝ 10,000.000









Ուժ երիտասարդության մեջ

«Դավիթբեկյան խաղեր» ուսումնամարզական մրցույթ-փառատոնը մեկնարկել է 2022 թվականին «Ամրոց» հիմնադրամի նախաձեռնությամբ՝ «Սեր, ուժ, հավատք, միասնականություն» գաղափարով:

Ծրագիրը ստեղծվել է որպես կրթական և մարզական հարթակ՝ ուղղված 14–17 տարեկան պատանիներին՝ նպաստելու նրանց ֆիզիկական պատրաստվածությանը, թիմային մտածողությանը և ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Կազմակերպչական զարգացում

Ծրագիրը ժամանակի ընթացքում ընդլայնվել է և կազմակերպչական առումով առանձնացել՝ ձևավորվելով որպես համանուն հասարակական կազմակեր- պություն:

Ներկայումս մրցույթ-փառատոնը կազմակերպվում է «Դավիթբեկյան խաղեր» հասարակական կազմակերպության կողմից, իսկ «Ամրոց» հիմնադրամը հանդիսանում է դրա գլխավոր աջակիցը:

Մրցույթի ձևաչափ

Մրցույթ-փառատոնն անցկացվում է ամեն տարի Հայաստանի հարավային դարպասում՝ Սյունիքում:

Մասնակցում են Հանրապետության բոլոր մարզերի պատանիները՝ մրցելով ավելի քան 14 մրցաճներում՝ շախմատից մինչև Խուստուփ լեռան հաղթահարում:

Սկսելով 2022 թվականին 8 թիմով, նախաձեռնությունը տարեցտարի աճել է. 2025 թվականին արդեն մասնակցել է 18 թիմ:

Ինչու է «Ամրոց» հիմնադրամը շարունակում աջակցել նախաձեռնությանը

«Ամրոց» հիմնադրամի գործունեության առանցքային ուղղություններից են հայրենիքը, կրթությունը և ազգային ինքնության ամրապնդումը:

«Դավիթբեկյան խաղերը» համադրում են այս երեք բաղադրիչները մեկ հարթակում:

- Ծրագիրը անցկացվում է Սյունիքում՝ Հայաստանի ռազմավարական կարևորություն ունեցող մարզում:

- Այն կրթական և դաստիարակչական գործիք է՝ զարգացնում է պատանիների գիտելիքները, պատասխանատվության զգացումը և թիմային մտածողությունը:

- Այն ձևավորում է հայրենիքի նկատմամբ գիտակցված վերաբերմունք՝ գործնական մասնակցության և փորձա-

Հիմնադրամը խաղերին աջակցելու համար կազմակերպեց «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ բարեգործական վիկտորինան՝ հավաքելով 1 մլն դրամ:

Հիմնադրամի աջակցությունը հիմքում համոզմունքն է, որ կրթությունը միայն դասարանով չի սահմանափակվում: Այն ներառում է նաև ֆիզիկական պատրաստվածությունը, արժեքային դաստիարակությունը և ազգային ինքնության գիտակցումը: Այս համատեքստում «Դավիթբեկյան խաղերը» երկարաժամկետ ներդրում՝ երիտասարդ սերնդի կրթական և հայրենասիրական կայացման գործում:



«**Զարկ**» կրթական ծրագիր
Բյուջե 24,000,000
Հոգով և մարմնով ամուր սերունդ

«Ամրոց» ազգային զարգացման հիմնադրամը «ԶԱՐԿ» կրթական ծրագրի համահիմնադիրն է: Ծրագիրը ստեղծվել է որպես համակարգված, շարունակական կրթական հարթակ՝ 10–17 տարեկան պատանիների համար:

Ծրագրի նպատակ
«ԶԱՐԿ»-ը ուղղված է դեռահասների ինքնուրույնության և կայացման գործընթացին: Այն նպաստում է, որ սաները՝

- կարողանան կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում,
- կայացնել ինքնուրույն որոշումներ,
- ստանձնել պատասխանատվություն,
- զարգացնել առաջնորդական հատկանիշներ,
- գործել համախմբված և արդյունավետ թիմում:

Կազմակերպչական ձևաչափ
Ծրագիրը բարեգործական է և սաների համար իրականացվում է անվճար:
Պարապմունքները անցկացվում են արտադասարանային ձևաչափով՝ շաբաթական 3 անգամ:

«Ամրոց»-ի դերը
«ԶԱՐԿ» ծրագիրը ստեղծվել է «Ամրոց» հիմնադրամի նախաձեռնությամբ և զարգանում է որպես հիմնադրամի կրթական ուղղության առանցքային բաղադրիչ:

«ԶԱՐԿ»-ն ունի երկու հիմնական փուլ.
Կրթական
Առաջնորդական

Կրթական բաղադրիչ
Ծրագիրը ներառում է.

- Ֆիզիկական պատրաստվածություն
- Ինքնապաշտպանություն
- Քաղպաշտպանություն
- Գոյատևման հմտություններ
- Լեռնագնացություն
- Առաջին օգնություն
- Արշավներ և ճամբարներ
- Հայրենաճանաչություն
- Քաղաքացիական հմտություններ
- Հոգեբանություն
- Հոգևոր զրույցներ

Ծրագրի շրջանակում գործում է 4 որակավորման աստիճան, որոնք սաները ստանում են տարեկան քննությունների միջոցով:Տարբերությունը այլ նախաձեռնություններից Ի տարբերություն կարճաժամկետ միջոցառումների կամ մրցութային ձևաչափերի, «ԶԱՐԿ»-ը կառուցված է որպես շարունակական կրթական գործընթաց:
Այն ոչ միայն ձևավորում է հմտություններ, այլ նաև ստեղծում է կարգապահության, ինքնակազմակերպման և պատասխանատվության մշակույթ:

«Վէմ» ռադիոկայան
1,200,000

«Ամրոց» հիմնադրամը 2022 թվականից «Վէմ» ռադիոկայանի կողքին է, քանի որ հավատում է, որ արժեքները պետք է ոչ միայն պահպանվեն, այլ ամեն օր հնչեն: Մեր թիմը հավատում է, որ հոգևոր և աշխարհայացքային խորը քննարկումները կարող են հանրային կյանքում փոփոխություն բերել և 2026-ին շարունակելու է աջակցությունը:

Բացի իր հիմնական ծրագրերից, «Ամրոց» ազգային զարգացման հիմնադրամը հովանավորում և աջակցում է մի շարք այլ կրթական, հայրենիքին և մշակույթին նվիրված նախաձեռնությունների: 2025 թվականին դրանք չորսն էին: Հիմնադրամի առաջնահերթությունը մնում է կրթական միջավայրի զարգացումը, ազգային ինքնության ամրապնդումը և հայրեն մշակութային բովանդակության խթանումը: Նման ծրագրերը լրացնում են հիմնադրամի ռազմավարական գործունեությունը և նպաստում ազգային և կրթական միջավայրի կայուն

«Մունք» տեխնոդրոց՝ Արցախի կրթական միտքը՝ Հայաստանում:
Բյուջե 1,000,000

Հայրենիքն ու Արցախն «Ամրոց»-ի համար արժեքներ են, ոչ թե աշխարհագրություն:
Մենք կարևորում ենք այն ծրագրերը, որոնք չեն ընդհատվում անգամ ամենածանր պայմաններում, այլ կարողանում են վերափոխվել, շարունակվել և ուժեղանալ:

«1000 ՎԱՀԱՆ» բարեգործական հիմնադրամը կրթություն արվեստի միջոցով հասցնում է մարզեր
Բյուջե 4,000,000

«Ամրոց» հիմնադրամը հավատում է, որ մշակույթը ոչ միայն շքեղություն է, այլև ուժ, աշխարհայացք, ինքնագիտակցություն և պատասխանատվություն կերտող միջավայր:

«Հայկական գանձեր» հիմնադրամը մշակութային ժառանգության թվային կամուրջն է
բյուջե 5,00,000

«Ամրոց»-ի աջակցել է հուշարձանների թվայցման նախագծին, որովհետև մեզ համար մշակութային ժառանգությունը պարզապես անցյալ չէ, այլ հայրենիք է, ինքնություն է և պատասխանատվություն ապագայի առաջ

«ԱՅԲ» կրթական հիմնադրամի «Արժեքահեն կրթություն» ուսուցչական երկօրյա համաժողով
Բյուջե 1,000,000

«Ամրոց» հիմնադրամի թիմը հավատում է, որ կրթության որակը սկսվում է ոչ թե ծրագրերից կամ դասագրքերից, այլ ուսուցչի աշխարհայացքից և արժեհամակարգից:

«Ամրոց» ազգային զարգացման հիմնադրամի գործունեությունը միավորված է մեկ գաղափարի շուրջ՝ կրթված, ինքնագիտակցված և պատասխանատու սերունդը մեր պետականության ամրության հիմքն է: Անցած տարին ևս ցույց տվեց, որ երկարաժամկետ ազդեցություն ստեղծվում է համակարգված աշխատանքիով: Մեր ծրագրերն, այո, տարբեր են ձևաչափով, սակայն միավորված են նույն նպատակով՝ամրապնդել հայերենը, զարգացնել կրթությունը, աջակցել ընտանիքին և ձևավորել հայրենիքին նվիրված, մտածող և գործուն սերունդ:

Շնորհակալություն մեր գործընկերներին, բարերարներին և բոլոր մասնակիցներին, որոնց աջակցությամբ հնարավոր է դառնում գաղափարները վերածել գործի: Առջևում, իհարկե, նոր նախաձեռնություններ են, բայց նպատակը նույնն է՝ ուժեղ հայրենիք, կրթված հասարակություն և հայալեզու ապագա:

ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՄՈՒՐ ՀԻՄՔԸ՝ ՄԻԱՍԻՆ

Նվիրաբերել →